Հավելված 1
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 3 -ի N 746 - Ա
որոշման

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ

1	Ծրագրի նպատակը	«Վերականգնում ու զարգացում» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի նպատակն է՝ աջակցել սոցիալապես անապահով, բռնության ենթարկված երեխաներին և անձանց, ցուցաբերել հոգեբանական աջակցություն, սննդի ապահովում, ամսական նպաստի տրամադրում, սեզոնային հագուստով ապահովում, կրթական դասընթացներ՝ համակարգչային, օտար լեզուների, արվեստի և այլ, ծնողների համար՝ մարզման կուրսեր, նաև՝ մասնագիտությունների ուսուցում, սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց համար՝ խնամքի կազմակերպում և այդ ծրագրի շրջանակներում կազմակերպության մասնաճյուղերի համար կահավորանքի և անհրաժեշտ պիտույքների բեռի ներմուծում (դպրոցական և գրասենյակային կահավորում, խնամքի պիտույքներ):
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3	Բարեգործները	Գլոբալ Էյդ Նեթուորք (Global Aid Network), Hoofdstaat 51, 3971KB Driebergen Gather and Care Ministry ԱՄՆ Սակրամենտոյի հայ կանանց միություն Tear Fond Անգլիա Այլ բարերար անհատներ
4	Ծրագիրն իրականացնողները	«Վերականգնում ու զարգացում» բարեգործական հասարակական կազմակերպություն, ք. Երևան, Արղության 29/4, ՀՎՀՀ՝ 00151001

5	Ծրագրի իրականացման վայրերը, բնագավառը	1. ք. Երևան, 2. Լոռու մարզ՝ ք. Ստեփանավան, գ. Ուռուտ, ք. Տաշիր 3. Արագածոտնի մարզ՝ գ. Ուջան, Կոշ 4. Տավուշի մարզ՝ ք. Դիլիջան, ք. Իջևան 5. Արցախի գյուղեր, ք. Ստեփանակերտ 6. Սյունիքի մարզ՝ ք. Սիսիան, ք. Գորիս 7. Վայոց ձորի մարզ՝ ք. Եղեգնաձոր Բնագավառը՝ սոցիալական
6	Ծրագրի բյուջեն	62.312.300 ՀՀ դրամ
7	Ծրագրի շահառուները կամ նրանց ընտրության սկզբունքները, չափանիշները	Ծնողազուրկ, սոցիալապես անապահով և/կամ բռնության ենթարկված երեխաներ և խնամակալներ, անկողնային հիվանդներ, միայնակ, խնամքից զուրկ տարեցներ, սահմանափակ կարողություն ունեցող անձինք Ընդհանուր 630 անձ Առաջնահերթությունը տրվում է նրանց, ովքեր մեկուսացված են հասարակությունից, ապրում են վարձակալված բնակարաններում, չունեն որևէ օգնություն հարազատներից
8	Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը	28.11.2020 թ. – 31.12.2021 թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը:	Մանդի ապահովում - 2.830.000 դր. նպաստների տրամադրում - 3.000.000 դր. ծնողների համար մասնագիտությունների ուսուցման նյութեր - 800.000 դր. երեխաների համար կրթական՝ համակարգչային, օտար լեզուների, տիկնիկագործական և այլ դասընթացներ - 8.000.000 դր. սահմանափակ կարողություն ունեցող անձանց խնամք և ժամանց - 1.200.000 դր.

		թատերական ներկայացումներ, բեմականացման դեկորացիաների, հագուստների պատրաստում - 2.600.000 դր. դասապատրաստում - գրենական պիտույքներ՝ 800.000 դր, ծնողավարության, տարիքային հոգեբանության և այլ մարզման կուրսեր - 1.200.000 դր. սեզոնային հագուստով ապահովում - 7.000.000 դր. Ընդհանուր՝ 13 ամսվա համար 27.430.000 դր. ծրագրի շրջանակներում 3 փուլով բեռի ներմուծում՝ 24.882.000 ՀՀ դրամ կազմակերպական ծախսեր ծրագրի ողջ ընթացքի համար՝ 9. 700. 000 ՀՀ դրամ բարեգործական բեռի ներմուծման հետ կապված միջնորդ կազմակերպության ծառայությունների ձեռքբերում՝ 300. 000 ՀՀ դրամ
10	Ձեռքբերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում կազմակերպության մասնաճյուղերի համար կահավորանքի և անհրաժեշտ պիտույքների բեռի ներմուծում (դպրոցական և գրասենյակային կահավորանք, խնամքի պիտույքներ) 3 փուլով՝ 24.882.000 ՀՀ դրամ, որից՝ 1-ին փուլ՝ բեռի ընդհանուր արժեք՝ 5.080.300 ՀՀ դրամ 2-րդ փուլ՝ բեռի ընդհանուր արժեք՝ 9.901.000 ՀՀ դրամ 3-րդ փուլ՝ բեռի ընդհանուր արժեք՝ 9.901.000 ՀՀ դրամ Տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում – 800.000 դր. կոմունալ ծառայությունների ձեռքբերում – 4.700.000 դր. Սննդի ձեռքբերում - 2.830.000 դր. նպաստների տրամադրում - 3.000.000 դր. ծնողների համար մասնագիտությունների ուսուցման նյութերի ձեռքբերում - 800.000 դր. երեխաների համար կրթական՝ համակարգչային, օտար լեզուների, տիկնիկագործական և այլ դասընթացների նյութերի ձեռքբերում - 8.000.000 դր. սահմանափակ կարողություն ունեցող անձանց խնամքի պարագաների ձեռքբերում և ժամանցի կազմակերպում - 1.200.000 դր. թատերական ներկայացումների, բեմականացման դեկորացիաների, հագուստների պատրաստման համար նյութերի ձեռքբերում - 2.600.000 դր. Դասապատրաստման համար գրենական պիտույքների ձեռքբերում՝ 800.000 դր,

		ծնողավարության, տարիքային հոգեբանության և այլ մարզման կուրսերի նյութերի ձեռքբերում՝ - 1.200.000 դր. սեզոնային հագուստի ձեռքբերում- 7.000.000 դր. բարեգործական բեռի ներմուծման հետ կապված միջնորդ կազմակերպության ծառայությունների ձեռքբերում՝ 300. 000 ՀՀ դրամ
11	Անմիջական շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը	Կազմակերպական ծախսեր ծրագրի ողջ ընթացքի համար՝ Տրանսպորտ – 800.000 դր. կոմունալ ծախսեր – 4.700.000 դր. աշխատավարձ - 4.200.000 դր.
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, սոցիալական աջակցության տարածքային մարմիններ, ք. Երևան, Երեխաների աջակցության կենտրոն
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխա-նիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն է ներկայացնում կազմակերպության Խորհուրդը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդատվական հանձնաժողովին հաշվետվությունների ներկայացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 3 -ի N 746 - Ա
որոշման

ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՑԱՆԿ

քանակ	անվանում	Արժեք (եվրո)
83 հատ	Դպր. սեղան	830
78 հատ	Դպր. աթոռ	1170
40 հատ	աթոռ	200
18 հատ	Գրասենյակային հավաքածու՝ բյուրո /գրասեղան, աթոռ, լույս/	480
44 տուփ	Տակդիր	1220
11 հատ	Սեղան	375
8 հատ	Պահարան	400
2 տուփ	Սավան	368
2 հատ	Հենասայլակ	60
2 հատ	Նստասայլակ	70

ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 5173 եվրո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ